

«Մխիթար Մեբաստացի» կրթահամալիր

Անգլիախոսների ակումբ

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում անգլախոսների ակումբի աշխատանքը ընթանալու է երկու ուղղությամբ՝ բանավոր քննարկումներ (2 ժամ) և թարգմանչական աշխատանք (2 ժամ):

Այս տարվա ընթացքում բանավոր քննարկումների համար առաջարկվում են հետևյալ թեմաները՝

Ես եմ կերտում իմ ապագան

Զանգվածային լրատվական միջոցները Հայաստանում

Սոցցանցերի առավելությունները և թերությունները

Սերունդները տարբեր են

Հեռուստատեսիալների վնասակար ազդեցությունը

Ինչ եմ ընթերցում

Գրագողություն

Հայկական կարծրատիպեր

Անընդհատ կրթություն

Ուսումնական տարվա ընթացքում սովորողները կարող են առաջարկել քննարկումներ իրենց հուզող թեմաներով: Քննարկման թեմաները նախապես են հայտարարվում, որպեսզի սովորողները կարողանան պատրաստվել ավելի բովանդակալից փաստարկներ և մտքեր արտահայտելու համար: Բանավոր քննարկումներից հետո սովորողներին առաջարկվում է գրավոր շարադրել իրենց տեսակետները: Գրավոր շարադրանքները սովորողները տեղադրում են իրենց բլոգներում: Լավագույնները հրապարակվում են mskh.am-ի անգլերեն էջում:

Ակումբի թարգմանչական նախագծային աշխատանքը այս տարի նույնպես նպաստելու է mskh.am-ի անգլերեն էջը հարստացնելուն, որը էապես օգնելու է “բազմալեզու mskh.am” նախագծի իրականացմանը:

Նախագծի ուսումնական նպատակը – սովորողները ձեռք են բերում հայերենից անգլերեն տարատեսակ տեքստեր թարգմանելու ունակություններ

Նախագծի գործնական նպատակը – կրթահամալիրի mskh.am-ը ունենում է իր ամենօրյա թարմացվող անգլերեն էջը

Նախագծի իրականացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ

Սովորողներին են ներկայացվում հետևյալ էլեկտրոնային բառարաններից ճիշտ օգտվելու

ձևերը. <http://translate.google.ru/?hl=ru&tab=wT#hy/en/> և <http://www.translator.am/am/index.html>

<http://www.lingvo-online.ru/ru>

Ընթացիկ աշխատանքների կազմակերպումը

- Նախքան նյութերի ընտրություն կատարելը տեղի է ունենալու վերջին երեք օրերի ընթացքում կրթահամալիրի առաջին էջում հրապարակված ամենահետաքրքիր ու կարևոր նյութերի անգլերեն բանավոր քննարկումներ: Այսպիսով, լինելու են **սովորող-սովորող, սովորող-դասավանդող երկխոսություններ, կարծիքների փոխանակումներ**: Քննարկումներից հետո սովորողներին 5-10 րոպե ժամանակ է տրվելու, որպեսզի նրանք գրեն իրենց կարծիքները հայերեն նյութերի «կարծիքներ» բաժնում: Այդպիսով կակտիվանա հողվածագիր-ընթերցող հետադարձ կապը:
- Նյութերի ընտրության հարցում **հաշվի է առվելու սովորողի կարծիքը**: Յուրաքանչյուր սովորող, կամ սովորողների աշխատանքային խումբ ինքն է ընտրելու թարգմանության համար նյութը՝ հիմնավորելով ընտրությունը: Հիմնավորումը լինելու է անգլերենով:
- Նախքան բուն թարգմանչական աշխատանքներին անցնելը սովորողներին՝ աշխատանքային խմբերին, տրվելու է այն առաջնային գիտելիքը, որն անհրաժեշտ կլինի տվյալ հողվածի թարգմանության համար: Առաջնային գիտելիքը կարող է լինել քերականական երևույթ, լեզվական կառուցվածք, բառակապակցություն, դարձվածք, որոնք դժվար է գտնել բառարաններում: Հիմնվելով առաջնային գիտելիքների վրա և բառարանների օգտագործմամբ սովորողները **իմաստի որոնում** են կատարելու: Իմաստի որոնումը տվյալ դեպքում հանգեցնելու է անգլերենի այն լեզվական կառուցվածքի հայտնաբերմանը, որը կհամապատասխանի հայերեն նախադասության իմաստին ու ոգուն:
- Յուրաքանչյուր հողվածի հրապարակումից հետո սովորողներին տրվելու է 5-10 րոպե ժամանակ, որպեսզի անգլերեն էջում գրեն իրենց կարծիքը անգլերենով: Դրանով կվերանա անգլերեն էջի ամենամեծ բացթողումը՝ կարծիքների բացակայությունը:
- Սովորողներն իրենց թարգմանությունները տեղադրելու են իրենց ուսումնական բլոգերում, որով էլ **կարժևորեն** իրենց կատարած աշխատանքը: